Բաց կանչ՝ Քաղաքային ուտոպիաներ. մենք փնտրում ենք համայնքային նախագծեր:

Աշխատում եք տեղական համայնքների հե՞տ: Գիտահետազոտություն եք կատարում արվեստի, կայունության և քաղաքային զարգացման ոլորտներո՞ւմ, կամ զբաղվում համայնքային արվեստո՞վ: Այդ դեպքում դիմե՛ք:

Հայաստանի Գյոթե ինստիտուտը հրավիրում է ՀԿ-ների, արվեստագետների խմբերի, անկախ նախաձեռնությունների և համայնքում գործող դերակատարների՝ դիմելու «Քաղաքային ուտոպիաներ» տարածաշրջանային նախագծին:

«Քաղաքային ուտոպիաներ» արվեստա-համայնքային նախաձեռնությունը փորձում է պատասխանել այն հարցին, թե ինչպես քաղաքները կարող են ձևավորել ավելի արդար, կայուն և ապրելու համար բարենպաստ պայմաններ՝ բնակիչների ակտիվ ներգրավվածությամբ: Նախագիծը միավորում է սոցիալական, էկոլոգիական և արվեստային պրակտիկաները: Անկարայի, Բելգրադի և Սկոպյեի մեր գործընկերների հետ միասին նպատակ ունենք ստեղծել տարածաշրջանային ցանց, որը կմիավորի արվեստային, սոցիալական և էկոլոգիական մոտեցումները և կզարգացնի համագործակցությունը տեղական նախաձեռնությունների միջև:

Այս բաց կանչի շրջանակում փնտրում ենք նախագծեր, որոնք կիրականացվեն հենց հայկական համատեքստի շրջանակում: Կարելի է ներկայացնել արդեն գործող ծրագիր կամ որևէ նոր նախաձեռնություն, որը կիրականացվի հենց «Քաղաքային ուտոպիաներ» նախագծի ընթացքում: Պայմանն այն է, որ նախագիծը համապատասխանի նշված թեմաներին և իրականացվի համայնքների ակտիվ մասնակցությամբ:

Ընտրված նախագծերը պետք է մեկնարկեն **2026 թ. առաջին կեսին**: Բաց ենք տարբեր ձևաչափերի, մեթոդների և արտիստիկ մոտեցումների համար: Կարևորը տեղական համատեքստի առկայությունն է, համայնքային ուղղվածությունը և ավելի կայուն ու արդար քաղաքային միջավայրի զարգացմանը նպաստելու պատրաստակամությունը:

Ի՞նչ ենք մենք առաջարկում՝

- Ֆինանսավորում տեղական նախագծերի իրականացման համար
- Մասնակցություն տարածաշրջանային մշակութային և համայնքային ծրագրերի
- Շարժունակության, փոխանակման և ռեզիդենտային ծրագրերի աջակցություն
- Տեսանելիություն Գյոթե ինստիտուտի միջազգային ծրագրի շրջանակում
- Հնարավորություն՝ Ձեր փորձն ու ուսումնասիրությունների արդյունքները ներառելու տարածաշրջանային ընդլայնվող արխիվում

Ովքե՞ր կարող են դիմել՝

Մենք փնտրում ենք կազմակերպություններ, նախաձեռնություններ և խմբեր, որոնք՝

- Աշխատում են ճարտարապետության, քաղաքաշինության, կայունության, ակտիվիզմի կամ համայնքային աշխատանքի ոլորտներում
- Ակտիվ համագործակցություն և կապեր ունեն տեղական դաշտում և ունեն փորձ համայնքային նախագծերում
- Պատրաստ են տարածաշրջանային համագործակցության և գիտելիքի փոխանակման
- Նվիրված են կայունության, սոցիալական արդարության, քաղաքային զարգացման և մշակութային մասնակցության թեմաներին
- 2026թ. պատրաստ են իրականացնել կամ հյուրընկալել ռեզիդենտային և փոխանակման ծրագրեր

Խնդրում ենք մինչև **15.02.2026** ուղարկել Ձեր մոտիվացիոն նամակը (միասնական PDF ձևաչափով)՝ «URBANE UTOPIEN» անվամբ Հայաստանի Գյոթե ինստիտուտի էլ. փոստին՝

- Տեղեկություններ կազմակերպության / նախաձեռնության մասին (մինչև 1 էջ)
- Նախկինում իրականացրած համապատասխան նախագծերի նկարագրություն (մինչև 2 էջ)
- Նախատեսվող կամ ընթացիկ նախագծի նմուշ (մինչև 2 էջ)

Կապ

Գյոթե ինստիտուտ Հայաստան
📩 **info.jerewan@goethe.de**